# ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ՏՕՆԸ

—o—

### ԿՈՉ

—

Բագւայ Հայոց Կուլտուրական Միութեան Հրատարակչական սեկցիայի բիւրօն նպատակ ունենալով հայ հասարակութեան լայն խաւերում և գիւղական ազգաբնակութեան շրջաններում տարածել իր հրատարակութիւնները, որոշել է առաջիկայ գրերի գիւտի 1500-ամեակի և հայկական տպագրութեան 400-ամեակի Համազգային Մեծ Տօնի առթիւ դիմել հայ հասարակութեան և խնդրել, հնարաւորութիւն տալ սեկցիային իր հրատարակութիւնների լրիւ կոմպլեկտը ուղարկել հայ գիւղական բոլոր դպրոցներին և տարածել հայ ընտանիքներում։

Որպէսզի իւրաքանչիւր ոք հնարաւորութիւն ունենայ իր լուման մտցնել յօգուտ այդ բարենպատակ գործի, հրատարակչական սեկցիան իր հրատարակութիւններից կազմել է չորս սերիա, I, II, III և IV հանրամատչելի հաւաքածու անուններով։

Առաջին հանրամատչելի հաւաքածուն իր մէջ պարունակում է 22 ր. 50 կ. գրքեր, պատկերներ և մի քարտէս և արժէ 15 ռուբլի։

Երկրորդ հանրամատչելի հաւաքածուն կազմուած է 15 ր. գրքերից, պատկերրերից և մի քարտէսից և արժէ 10 ռուբլի։

Երրորդ հանրամատչելի հաւաքածուն կազմուած է գրքերից և պատկերներից 7 ր. 50 կ. արժողութեամբ և արժէ 5 ռուբլի։

Չորրորդը՝ կազմուած է 5 ր. գրքերից և պատկերներից և արժէ 3 ռուբլի։

Դիմել Բագու Կուլտուրական Միութեան։

Բիւրօյի նախագահ՝
Ա. Մալխասեանց

Քարտուղար՝
Բ. Մարտիրոսեանց

Բագու, 20 սեպտ.

*) Այդ համաձայնութիւնը Ռուսիայի և Գերմանիայի միջև, ինչպէս յայտնի է «Рус. Сл.»-ի տեղեկութիւնից, արդէն կայացած է.

## ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ԺՈՂՈՎ

—

Բաթում, 20 սեպտ.

Երէկ ամսիս 19-ին, քաղաքիս հայ հաստատութիւնների ներկայացուցիչների մասնակցութեամբ տեղի ունեցաւ մի խորհրդակցական ժողով, թէ ինչպէս և ինչ ձևով տօնել Բաթումում տառերի գիւտի 1500 և տպագրութեան 400-ամեակների միացեալ յոբելեանները։

Ժողովը բաւականին հետաքրքրական էր և, ի նկատի ունենալով այստեղ արծարծուած մտքերը դէպի Էջմիածինը, որոնք մի տեսակ զայրոյթի և բողոքի կնիք էին կրում, արժէ կանգ առնել մանրամասնութիւնների վրայ։

Ժողովի նախաձեռնութիւնը պատկանում էր Կովկասի Հայոց Բարեգ. Ընկ. տեղական ճիւղի վարչութեան և հրաւիրուած էին հետևեալ մարմինները. 1) Հայոց ծխական դպրոցի հոգաբարձութիւնը, 2) Նոյն դպրոցի մանկավարժական կազմը և ծնողական խորհրդի անդամները, 3) Հայ կաթոլիկաց դպրոցի հոգաբարձութիւնը և մանկավարժական կազմը և 5) Կովկ. Հայոց Բարեգ. Ընկ. տեղական ճիւղի վարչութիւնը։

Դժբախտաբար, ժողովին հրաւիրուած հաստատութիւնների անդամները բոլորը չէին եկել։

Ժողովի նախագահ հայր Միլեանը նիստը բանալով՝ մի քանի խօսքով բացատրեց ժողովի նպատակը, ապա կարդաց Էջմիածնից ստացած հրաւիրաթուղթը ազգային այդ երկու յոբելեանները տօնելու կարգի մասին առաջիկայ հոկտեմբերի 12 և 13-ին։

— Համաձայն էք, պարոններ, այս ծրագրով տօնելու, — դիմում է հայր նախագահը ժողովականներին։

Ահա այստեղ էր, որ ժողովականներից մի քանի հոգի առաջարկում են հետևեալը. ի նկատի ունենալով Էջմիածնի վերջերս բռնած դիրքը դէպի այնպիսի մի պատկառելի հիմնարկութիւն, որպիսին է Թիֆլիսի Թեմական Յոբելեանական Յանձնաժողովը՝ կազմուած գրեթէ մեր բոլոր ազգային կուլտուրական հիմնարկութիւնների ներկայացուցիչներից, ի նկատի ունենալով որ Էջմիածինը պատճառ դարձաւ պառակտման այնպիսի մի համազգային տօնի վերաբերմամբ, որպիսին ներկայանում է տառերի գիւտի և տպագրութեան յոբելեանների միացեալ տօնը, — բոլորովին մի կողմ թողնել Էջմիածնից ստացուած «հրահանգ-ծրագիրը» և միահամուռ ոյժերով տօնել ամենաշքեղ և ժողովրդին մատչելի կերպով այս մեծ յոբելեանները։

Չնայելով ժողովում մի քանի հոգի իրենց պատրաստակամութիւնը յայտնեցին իբր թէ ամենաբուռն կերպով բողոքելու Էջմիածնի բռնած դիրքի նկատմամբ, բայց «խոհեմութիւն» համարեց այս ժողովում չզբաղուել բողոքի հարցով։

Եթէ այսպիսի մի ժողովում, որ ներկայ են մեր աչքի ընկնող հաստատութիւնների ներկայացուցիչները, անյարմար են համարում բողոքելը, ապա էլ ինչ պատէհ առիթի պիտի սպասեն։

Այստեղ դարձեալ շատ բան ասւեց Էջմիածնի վերջերս բռնած պարսաւելի և անհեռատես քայլերի մասին։

Ժողովը վերջացաւ նրանով, որ գրեթէ մի կողմ ձգեց այդ «հրաւիրաթուղթը» և միաձայն որոշեց անկախ այդ «հրահանգից», միացեալ ուժերով և վայելուչ կերպով տօնել ազգային այդ երկու նշանաւոր յոբելեանները և գործը գլուխ բերելու համար ընտրեց մի յանձնաժողով, որին և յանձնարարեց ծրագիրներ կազմել, նախապատրաստական աշխատանքներ տեսնել և եկող ամսի 12-ին և 13-ին մեծ շուքով տօնել ազգային այդ նշանաւոր մեծ տօները։

Առաջի օրը, այսինքն 12-ին, կը լինի ցերեկոյթ աշակերտութեան համար, իսկ 13-ին մեծերի համար դարձեալ ցերեկոյթ, ուր տեղի կունենայ տօնին պատշաճաւոր բանախօսութիւն և այլն։

Amiko